ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Արվեստի և կերպարվեստի

դասավանդման նպատակներն ու խնդիրները

Հեղինակ՝ Հասմիկ Ավետիսյան

Ղեկավար՝ Լիլիթ Իսկոյան /մանկ. գիտ. թեկ., դոցենտ/

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……..…..3

Արվեստի և կերպարվեստի դասավանդման նպատակներն ու խնդիրները ……4

Եզրակացություն……...…13

Օգտագործված գրականության ցանկ……...…14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Արվեստը մի անավարտ կամուրջ է, որի մեկ ոտքը հենված է կյանքի վրա, իսկ մյուսը մեկնված է դեպի անեզրությունը…Ամեն մի հանճար երկարացնում է այդ ոտքը, որպեսզի գտնի երկրորդ հենարանը… և այդպես անվերջ…Դրա համար արվեստը մարդկության լավագույն պատմությունն է…>> Երվանդ Քոչար

Արվեստը հասարակական գիտության ձև է, մարդու ստեղծագործ աշխատանքի, հոգևոր մշակույթի տեսակ և իրականության ճանաչման յուրահատուկ եղանակ: Արվեստում իրականությունը արտացոլվում է գեղագիտորեն, գեղարվեստական կերպարների միջոցով: Այդ իսկ պատճառով արվեստը մարդու համար ունի կենսական նշանակություն: Առանց արվեստի թերի կլինի մարդու համակողմանի և ներդաշնակ զարգացումը: Արվեստի ճյուղերից հատկապես կերպարվեստն է, որ հնարավորություն է տալիս աշակերտներին (ինչպես և մարդուն) դուրս գալ կաղապարներից և ստեղծագործել յուրովի: Կերպարվեստը միտված է ոչ միայն բազմաթիվ գիտելիքներով և հմտություններով զինելու երեխաներին, այլև ավելի գունեղ ու պատկերավոր դարձնելու մայրենիի, մաթեմատիկայի, տեխնոլոգիայի դասերը: Դպրոցում կերպարվեստ առարկայի ուսումնասիրումը և դասավանդումը նպաստում է աշակերտի գաղափարական գիտակցության ձևավորմանը, գեղագիտական դաստիարակության իրականացմանը, ճաշակի զարգացմանը, օգնում է աշակերտներին ըմբռնելու, թե ինչպիսի հնարավորություններ է ընձեռում նկարելու կարողությունը: Նկարելու հմտություն ունենալը անգնահատելի ծառայություն կարող է մատուցել մասնագիտական տարբեր բնագավառներում (ճարտարապետություն, մեքենայաշինություն, բժշկություն և այլն): Այդ իսկ պատճառով այն աշխատանքային դաստիարակության հիմք է հանդիսանում: Դա հնարավորություն է տալիս շրջապատող իրականությունը տեսնել, հասկանալ, գնահատել և յուրովի մեկնաբանել:

Արվեստի և կերպարվեստի դասավանդման նպատակներն ու խնդիրները

<<Արվեստը բնության պատճենահանումն չէ, այն բնության զուգահեռն է և ոչ թե նրա շարունակությունը,այն պետք է լինի բնության պես ներդաշնակ, բնության պես միասնական ու հուզիչ:>> Մ. Սարյան Արվեստը, լինելով մարդկային ստեղծագործությունների միասնություն, համարվում է նաև հասարակության գիտակցության ձևերից մեկը: Այն իրականության արտացոլումն է գեղարվեստական կերպարների միջոցով: Արվեստը ստեղծվում է մտքի և միջավայրի համադրումից: Այն օգնում է ճանաչել աշխարհը, ձևավորում է մարդկանց հոգևոր նկարագիրը, նրանց զգացմունքներն ու մտքերը: Այդ իսկ պատճառով արվեստը իր կարևորագույն դերն ու նշանակությունն ունի մարդու գեղագիտական էսթետիկական բազմակողմանի և ներդաշնակ զարգացման գործում: Սկզբնավորվելով մարդու աշխատանքային գործունեությունից՝ արվեստը բարենպաստ ազդեցություն է ունեցել հատկապես մարդու գեղագիտական պատկերացումների ընդարձակման վրա:

Դեռ հին ժամանակներից հայտնի նկարիչները և արվեստագետները՝ Ալբրեխտ Դյուրերը, Լեոնարդո դա Վինչին և այլոք ստեղծել են մանկավարժական նշանակություն ունեցող գրքեր, դասագրքեր, որոնց միջոցով փորձել են մարդուն էլ ավելի մոտեցնել արվեստին և նրա մեջ սերմանել գեղագիտական ճաշակ և գեղեցիկը ընկալելու, գնահատելու կարողություն: Արվեստը դա անձի կողմից արտահայտվելու մի յուրահատուկ ձև է, որի միջոցով նա արտահայտում է այն ինչ զգում է և տեսնում է:

Արվեստի միջոցով է, որ ընկալվում է իրականությունը: Արվեստի միջոցով գնահատվում և արժևորվում է արվեստագետների դերը հասարակության մեջ, ինչպես նաև տարբեր ժամանակաշրջանների (անտիկ, միջնադար, վերածնունդ, ժամանակակից և այլն) արվեստի տեսակների, ժանրերի, ձևերի, ոճերի և ուղղությունների դերը արվեստում: Մարդու գեղագիտական, էսթետիկական, համակողմանի և ներդաշնակ զարգացման գործում իր կարևոր դերն ու նշանակությունը ունի արվեստը: Իրականության ճանաչումը և մարդու գեղարվեստական ստեղծագործությունը իրականացվում է արվեստի տարբեր ճյուղերի՝ կերպարվեստի,

երաժշտության, գրականության, պարարվեստի, կինոյի, թատրոնի, կրկեսի և այլնի միջոցով:

Հանրակրթական դպրոցներում արվեստի ուսուցման նպատակներն են՝

1. Զարգացնել աշակերտների երևակայությունը, ստեղծագործական և պատկերավոր մտածողությունը, նպատակասլացությունը:

2. Ձևավորել դատողություններ, վերլուծություններ և որոշումներ կայացնելու կարողություններ:

3. Ձևավորել գեղեցիկը տեսնելու, զգալու, գնահատելու, արարելու ցանկություն և կարողություն:

4. Ձևավորել ակտիվ ունկնդիր՝ համերգասրահներ, թանգարաններ, պատկերասրահներ այցելելու ցանկություն և պահանջ:

5. Ձևավորել ազգային մշակութային արժեքների պահպանման և մշակութային արվեստի ոլորտում մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմաններ:

6. Պահպանել և զարգացնել հայկական մշակույթի և արվեստի բնագավառում ձևավորված գեղարվեստական կրթության ավանդույթները:

Դպրոցում այսօր աշակերտների գեղագիտական դաստիարակության շատ հարցեր ուղղակիորեն լուծվում են գրականության, կերպարվեստի, երգ-երաժշտության, արտադասարանական, արտադպրոցական ձեռնարկումների միջոցով:

Արվեստի ճյուղերից հատկապես կերպարվեստն է, որ հնարավություն է տալիս աշակերտներին (ինչպես և մարդուն) դուրս գալ կաղապարներից և ստեղծագործել յուրովի: Յուրաքանչյուր երեխա նույն պատկերը իր պատկերացմամբ է նկարում և հիանում իր ստեղծածով: Դրա համար հարկավոր է երեխային ոգևորել նույնիսկ ամենաչնչին աշխատանքի համար:

Կերպարվեստը արվեստի ամենահնագույն և կարևոր տեսակներից է: Կերպարվեստը, որպես դասավանդման առարկա, կարևոր դեր ունի աշակերտների համընդհանուր դաստիարակության գործում: Կերպարվեստի դասվանդման ժամանակահատվածում աշակերտների մոտ զարգանում են հետաքրքրություններ արվեստի ստեղծագործությունների, ինչպես նաև շրջապատի նկատմամբ, ինչպես նաև գեղեցիկը նկատելու, զգալու և գնահատելու ունակություններ:

Կերպարվեստի հիմնական տեսակներն են՝

Գեղանկար, գծանկար, քանդակագործություն, ճարտարապետություն:

Նկարչություն



Քանդակագործություն

Ճարտարապետություն

Նկարչությունն ունի իր ժանրերը: Դրանք են՝

- Դիմանկար
- Բնանկար
- Ծովանկար
- Պատմական ժանր
- Նատյուրմորտ
- Կենցաղային ժանր
- Դիցաբանական ժանր
- Անիմալիստական ժանր

Դպրոցում կերպարվեստի դասավանդումը հենվում է ռեալիստական արվեստի գեղարվեստական առանձնահատկությունների վրա, որը արտահայտվում է գեղարվեստական կերպարի միջոցով: Առարկայի ուսուցման պրոցեսի հիմքում ընկած է ընդհանուր ամբողջականության սկզբունքը, որն իրենից ներկայացնում է աշակերտների կողմից գեղարվեստական կերպարի ընկալման և դրա ստեղծման գործնական կարողությունների սիստեմատիկ զարգացումը:

Կերպարվեստի դասավանդման ընթացքում գործնական կարողությունների և գեղարվեստական ընկալման հմտությունների զուգակցումը աշակերտների մեջ զարգացնում է իրականության մեջ և արվեստում գոյություն ունեցող գեղեցիկին արձագանքելու ընդունակությունները, հետաքրքրություններ գեղարվեստական ստեղծագործությունների նկատմամբ:

Հանրակրթական դպրոցում կերպարվեստն ուսումնասիրվում է որպես արվեստի տեսակ (առարկա): Այն ունի միայն իրեն բնորոշ նպատակներ և խնդիրներ՝ դաստիարակել հոգևոր և բարոյական բարձր արժեքներով մարդ:

Դպրոցում կերպարվեստի դասավանդումը լուծում է շատ կարևոր խնդիրներ՝

- Հասարակության կյանքում գոյություն ունեցող գեղարվեստական կուլտուրայի երևույթների յուրացում
- Գեղարվեստական գործունեության բնագավառում գործնական կարողությունների ձևավորում
- Տեսողական ընկալման, գունազգացության, տարածական մտածողության, ստեղծագործական երևակայության և նպատակաուղղվածության զարգացում:
- Արվեստի և իրականության նկատմամբ ակտիվ գեղագիտական վերաբերմունքի դաստիարակում, ուսումնական պրոցեսի ընթացքում նկարչական ընդունակությունների գործնական կիրառում:

Հանրակրթական դպրոցում կերպարվեստի դասավանդման հիմնական խնդիրներից է նաև նկարելու հնարներին ու հմտություններին ծանոթացնելը. ինչպես բռնել մատիտը, տանել գծեր, արտահայտել ծավալը, պատկերել առարկան հարթության վրա, ուսուցիչը ծանոթացնում է նկարչական տարբեր նյութերին և գործիքներին, ցույց տալիս թե ինչ հաջորդականությամբ է հարկավոր աշխատել նկարելիս:

Ելնելով դաստիարակության ընդհանուր խնդիրներից՝ դպրոցում կերպարվեստի դասավանդման հիմնական նպատակներն են՝

- Պատրաստել հասարակության համակողմանի զարգացած և կրթված անդամներ
- Գեղագիտորեն դաստիարակել երեխային՝ զարգացնելով գեղագիտական ճաշակը
- Օգնել երեխային ճանաչել շրջապատող աշխարհը
- Սովորողներին հաղորդել իրատեսական նկարչության տարրական գիտելիքները
- Զարգացնել տարածական մտածողություն և պատկերային երևակայություն
- Աշակերտներին ծանոթացնել հայկական և համաշխարհային արվեստի ստեղծագործություններին, սերմանել հետաքրքրություն գեղարվեստական ստեղծագործությունների նկատմամբ:

Կերպարվեստ առարկայի դասավանդումն հանրակթրական դպրոցում իրականցվում է դասերի չորս հիմնական տեսակների միջոցով՝

- Պատկերում բնօրինակից

- Թեմատիկ նկարչություն

- Զարդանկարչություն (դեկորատիվ նկարչություն)
- Զրույց կերպարվեստի մասին:

Պատկերում բնօրինակից Զրույց կերպարվեստի մասին

Թեմատիկ նկարչություն

Զարդանկարչություն (դեկորատիվ նկարչություն)

Դասերի տեսակները դասավանդման ընթացքում պետք է փոխկապակցված լինեն, լրացնեն մեկը մյուսին:

Պատկերում բնօրինակից – Այս տեսակն իրենից ներկայացնում է տարբեր առարկաների պատկերում: Դրանք ուսուցողական աշխատանքներ են՝ կատարված մատիտով և ներկերով: Այս դասի տեսակը զարգացնում է աչքի և ձեռքի փոխկապակցվածությունը: Դասի այս տեսակը թեմատիկ և դեկորատիվ աշխատանքների համար նախապատրաստական փուլ է:

Թեմատիկ նկարչություն - Շրջակա միջավայրի պատկերում, այս կամ այն գրական ստեղծագործության ձևավորում կամ պատկերազարդում: Թեմատիկ նկարչությունը միաժամանակ երեխաներին ընձեռում է ազատ մտածելու և ստեղծագործելու հնարավորություն:

Դեկորատիվ նկարչություն – Երեխաները ծանոթանում են դեկորատիվ կիրառական արվեստի յուրահատկություններին: Սովորեցնում է կազմել նախշեր բուսական, կենդական և երկրաչափական պատկերներով:

Զրույց կերպարվեստի մասին – Այս դասի տեսակի նպատակն է աշակերտներին ծանոթացնել հանրահայտ գեղանկարիչների, քանդակագործների, ճարտարապետների կյանքին ու ստեղծագործություններին: Ընդհանուր տեղեկություն տալ կերպարվեստի, նրա տեսակների ու ժանրերի մասին: Սովորողներին սովորեցնել բանավոր վերարտադրել սեփական մտքերն ու զգացմունքները արվեստի ստեղծագործությունների մասին: Զրույցների դասը անպայման պետք է ուղեկցվի ցուցադրումներով:

Կերպարվեստը այն առարկաներից մեկն է, որին անհամբերությամբ սպասում են աշակերտները, հատկապես՝ փոքրերը: Կերպարվեստը միտված է, ոչ միայն բազմաթիվ

գիտելիքներով և հմտություններով զինելու երեխաներին, այլև ավելի գունեղ ու պատկերավոր դարձնելու մայրենիի, մաթեմատիկայի, տեխնոլոգիայի դասերը: Կերպարվեստի ժամերին շատ արդյունավետ է գործում նաև միջառարկայական կապը: Կերպարվեստ առարկան իր բովանդակության և յուրահատկության շնորհիվ փոխադարձ կապ է ստեղծում բոլոր առարկաների հետ և հենց այդ կապի միջոցով էլ բացահայտում է սովորողների մտավոր և հոգևոր ներուժի զարգացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կերպարվեստ առարկայի դասավանդումը ունի իր ուրույն դերը և նշանակությունը երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացում: Կերպարվեստի դասավանդման ժամանակ աշակերտների մոտ զարգանում է գեղարվեստական ընկալումը, մեծանում է հետաքրքրությունը արվեստի ստեղծագործությունների, ինչպես նաև շրջապատի նկատմամբ, գեղեցիկը նկատելու զգալու և գնահատելու ունակությունները: Հաշվի չառնելով, որ կերպարվեստը երեխայի մտածողության և երևակայության զարգացման հզոր միջոց է, շատ հաճախ ծնողների և որոշ ուսուցիչների կողմից այն դիտվում է որպես «երկրորդական» թվացող առարկա: Բայց դա հակասում է կերպարվեստի դասավանդման կանոններին և այդպիսի մոտեցումը չպետք է տեղ գտնի ինչպես դպրոցում, այնպես էլ հասարակության մեջ:

Որպեսզի կերպարվեստի դասերը դպրոցում անցկացվեն լիարժեք, դպրոցը պետք է ունենա կերպարվեստի կահավորված և դիդակտիկ ու ցուցադրական նյութերով հագեցած դասարան: Անհրաժեշտ է նաև 5-7-րդ դասարանների կերպարվեստի դասագրքերի առկայությունը:

Կերպարվեստի աշխարհում ամեն ինչ գեղեցիկ է, գունագեղ ու պայծառ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արվեստի պատմություն, Յու. Վ . Յուզբաշյան, Ե. Ա. Գյուլմիսարյան, Գ. Կ. Մելքոնյան
2. Նախաշավիղ (գիտամեթոդական հանդես)
3. Տեղեկություններ համացանցից
4. Կերպարվեստ և գեղարվեստական աշխատանք Լ.Ս. Ներսիսյան
5. “Что такое искусство?” В.В. Алексеева
6. Детская энциклопедия том 10 - “Литература и искусство”